ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

–

N o 04 -L « 13 » 01 2022թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐՕՐՅԱ ԽՄԲԻ ԿՐԹԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 13-ի N 38-Ն հրամանով հաստատված Հավելված 1-ի 8-րդ կետի պահանջը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության երկարօրյա խմբի կրթական օրինակելի ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

X

Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարի 2022 թվականի ----------ի ---Լ հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐՕՐՅԱ ԽՄԲԻ ԿՐԹԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳՐԵՐ

I. Ընդհանուր դրույթներ

1. Հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության երկարօրյա խմբի կրթական օրինակելի ծրագրերը կազմված են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 13.10.2020 թ. N 38-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի» պահանջին համապատասխան:
2. Ուսումնական հաստատության երկարօրյա խմբի կրթական ծրագրերը իրենց մեջ ներառում են երկարօրյա խմբի սովորողների (այսուհետ՝ սովորող) սննդի, հանգստի, դասապատրաստման կազմակերպումը՝ որպես երկարօրյա կրթական ծրագրի բաղկացուցիչ մասեր:
3. Տվյալ օրվա ուսումնական պարապմունքներից հետո տարրական և միջին դպրոցների սովորողի համար իրականացվում է սննդի կազմակերպում՝ 1-4-րդ դասարաններում՝ մինչև 30 րոպե, իսկ 5-9-րդ դասարաններում՝ մինչև 20 րոպե տևողությամբ:
4. Տվյալ օրվա ուսումնական պարապմունքներից հետո տարրական և միջին դպրոցների սովորողի համար իրականացվում է հանգստի (այդ թվում զբոսանքի) կազմակերպում՝ 1-4-րդ դասարաններում՝ մինչև 80 րոպե, իսկ 5-9-րդ դասարաններում՝ մինչև 30 րոպե տևողությամբ:
5. Տարրական և միջին դպրոցների սովորողի համար իրականացվում է դասապատրաստում՝ 1-4-րդ դասարաններում՝ 2 ակադեմիական ժամ, իսկ 5-9-րդ դասարաններում՝ 3 ակադեմիական ժամ:
6. Հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունը կարող է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1) Ծնողի նախաձեռնությամբ երկարօրյա խմբում ընդգրկված սովորողների, ինչպես նաև դպրոցի կողմից այդ խմբում ընդգրկված ցածր առաջադիմությամբ սովորողների երկարօրյա ուսուցման ծրագիր՝ ըստ կրթության աստիճանների (տարրական և միջին դպրոց):
2) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրյա ուսուցման ծրագիր,
3) Սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա ուսուցման կազմակերպման ծրագիր,

7. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրյա ուսուցման ծրագիրը կարող է իրականացվել մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցման և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի անհատական ուսուցման պլանով նախատեսված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքների ձևավորման ու զարգացման ուղղություններով:

II. Ծնողի նախաձեռնությամբ երկարօրյա խմբում ընդգրկված սովորողների, ինչպես նաև դպրոցի կողմից այդ խմբում ընդգրկված ցածր առաջադիմությամբ սովորողների երկարօրյա ուսուցման ծրագիր

8. Տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ) երկարօրյա խմբի նպատակներն են՝
1) Իրականացնել երկարօրյա խմբում ընդգրկված բոլոր սովորողների դասապատրաստման գործընթացը,
2) Աջակցել ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին ուսումնական առարկաների չափորոշչային և ծրագրային պահանջներին համապատասխան ուսումնական նյութի յուրացման գործընթացում,
3) Դասապատրաստման գործընթացում որակյալ մանկավարժամեթոդական ծառայություններ տրամադրել սովորողներին,
4) Նպաստել սովորողների ինքնուրույն սովորելու հմտությունների, ստեղծագործական ունակությունների և ինքնակազմակերպման կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը,

9. Տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ) սովորողների (այդ թվում՝ ցածր առաջադիմությամբ) երկարօրյա խմբի աշխատանքների հիմնական ուղղություններն են՝
1) ճանաչողական և ուսումնական գործունեությունը,

2) հաղորդակցական, համագործակցային և խմբային աշխատանքի հմտությունների զարգացումը,
3) բարոյական, գեղագիտական, հայրենասիրական դաստիարակությանն ուղղված ուսումնադաստիարակչական գործընթացները,
4) առողջության պահպանումն ու առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորումը,
5) աշխատանքային հմտությունների զարգացումը,
6) որևէ առարկայի (առարկաների) թեմատիկ գրավոր աշխատանքներից 10 միավորային սանդղակով 1-3 միավոր գնահատված սովորողների ուսումնառության արդյունքների բարելավումը:

10. Երկարօրյա խմբի ուսումնական խնդիրներ.

1) շրջակա աշխարհի մասին գիտելիքների և պատկերացումների ընդլայնում,
2) ուսումնառության նկատմամբ մոտիվացիայի և հետաքրքրությունների բարձրացում, սովորելու պահանջմունքի և հմտությունների ձևավորում,
3) գործնական հմտությունների զարգացում,
4) ուսումնական առարկայի չափորոշչի և ծրագրի նվազագույն պահանջների յուրացում,
5) տնային աշխատանքների կատարման համար անհրաժեշտ հմտությունների ձևավորում և զարգացում,
6) դասապատրաստման ժամանակ սովորողների կողմից իրենց դասարանի դասացուցակին համապատասխան ուսումնական առարկաներից հանձնարարված դասանյութերի յուրացում
7) ցածր առաջադիմություն ունեցող՝ որևէ առարկայի (առարկաների) թեմատիկ գրավոր աշխատանքներից 10 միավորային սանդղակով 1-3 միավոր գնահատված, սովորողների ուսումնառության արդյունքների բարելավում,
8) սոցիալական, կենցաղային գիտելիքների և հմտությունների զարգացում, հիգիենայի և անվտանգ վարքագծի կանոնների պահպանմանն ուղղված կարողությունների ձևավորում և զարգացում:

11. Երկարօրյա խմբի դաստիարակչական խնդիրներ.

1) սովորողների ֆիզիկական և հոգեբանական առողջության ամրապնդում,
2) աշխատանքային հմտությունների զարգացում, տարբեր աշխատանքների նկատմամբ հետաքրքրությունների և նախասիրությունների ձևավորում,
3) կարգապահության և վարքականոնների պահպանման ուղղությամբ վերաբերմունքի և վարքագծի ձևավորում,

4) գեղարվեստական և ստեղծագործական կարողությունների բացահայտում և հմտությունների ձևավորում:

12. Ուսումնադաստիարակչական աշխատանքների ակնկալվող վերջնարդյունքները.

1) Սովորողը պետք է յուրացնի իրեն տարբեր առարկաների հանձնարարված ուսումնական նյութը, զարգացնի սեփական ուսումնառությունը կազմակերպելու հմտություններ.

2) կարևորի սովորելը և ցուցաբերի հետաքրքրություն սովորելու նկատմամբ.

3) համատեղ կամ ինքնուրույն իրականացնի պարզ հետազոտական աշխատանքներ, անի եզրակացություններ՝ հիմնվելով ստացված տվյալների և դիտարկումների վրա, փաստերն օգտագործի իր գաղափարները հիմնավորելու համար և ներկայացնի ստացված արդյունքը պարզ գիտական բառապաշարով.

4) հոգատար վերաբերմունք դրսևորի բնակավայրի, համայնքի բնության և պատմամշակութային ժառանգության օբյեկտների, ինչպես նաև դպրոցի գույքի, սարքավորումների հանդեպ.

5) զբաղվի անհատական կամ խմբային գեղարվեստական գործունեությամբ.

6) ստեղծի ընկերական հարաբերություններ, լսի, հասկանա, ապրումակցի, քաջալերի և աջակցի մյուսներին, համագործակցի տարբեր ձևաչափերով, դրսևորի դրական վերաբերմունք, ձգտի կոնֆլիկտների խաղաղ լուծմանը.

7) դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին.

8) դրսևորի իր մտավոր և ֆիզիկական կարողությունները շարունակաբար զարգացնելու վարքագիծ.

9) մասնակցի արտադասարանական միջոցառումների, որոնք կնպաստեն իր կրթական և մշակութային որակների զարգացմանը.

13.Տարրական դպրոցի ավարտական դասարանի սովորողների մոտ պետք է ձևավորվի հանրակրթական հիմնական ծրագրի տարրական աստիճանի համար Հանրակրթության պետական չափորոշչով և առանձին ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված կրթական վերջնարդյունքների (կարողունակությունների) հիմնական պահանջները:

14. Տվյալ օրվա ուսումնական պարապմունքներից հետո հաջորդաբար իրականացվում են հետևյալ աշխատանքները՝

1) սննդի կազմակերպում,

2) հանգստի, զբոսանքի, ինչպես նաև լիցքաթափող, ճանաչողական և զարգացնող խաղերի կազմակերպում,
3) դասապատրաստում, տնային հանձնարարությունների կատարում,
4) էքսկուրսիաների կազմակերպում,
5) խմբակների, պարապմունքների և միջոցառումների կազմակերպում:

15. Երկարօրյա խմբի հետ կատարվող աշխատանքների համառոտ նկարագրությունը. սույն ծրագրի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն դասերից հետո սովորողները նախ և առաջ ճաշում են և հանգստանում: Սովորողների ակտիվ հանգիստի ձևերից են լիցքաթափող, ճանաչողական և զարգացնող խաղերը, քայլելը, որոնց ընթացքում ապահովվում է սովորողների շարժունությունը: Հանգստից հետո կազմակերպվում է սովորողների դասապատրաստումը: Դասապատրաստման ժամանակի բաշխումն ըստ առարկաների և ըստ շաբաթվա օրերի՝ ներկայացվում է խմբի աշխատանքի կարգացուցակում (ռեժիմում): Դասապատրաստումը ենթադրում է ուսուցիչների կողմից հանձնարարված դասերի յուրացում, ինչպես նաև առաջադրանքների կանոնավոր և համակարգված կատարում: Դասապատրաստումն իրականացնում է տվյալ ուսումնական հաստատության երկարօրյա ուսուցման մանկավարժական աշխատողը, որը կազմակերպում է սովորողի սննդի, հանգստի և դասապատրաստման գործընթացները, ինչպես նաև սովորողին անհրաժեշտ աջակցության ծառայությունները: Երկարօրյա խմբում ուսումնադաստիարակչական աշխատանքը ներառում է միմյանց հետ փոխկապակցված երկու ուղղությամբ գործողություններ.

ա. գործողություններ, որոնք խմբային են և լիովին իրականացվում են մանկավարժական աշխատողի անմիջական մասնակցությամբ,

բ. գործողություններ, որոնք իրականացվում են սովորողի նախասիրությունների հաշվառմամբ, անհատական և փոքր խմբային աշխատանքների միջոցով, որտեղ մանկավարժական աշխատողը կատարում է ուղղորդողի և աջակցողի դեր: Այդպիսի գործողություններ են, օրինակ՝ ընթերցանությունը, խմբակներին մասնակցելը, մտավոր (ինտելեկտուալ), գեղարվեստական, սպորտային, տեխնոլոգիական և այլ ուղղվածություն ունեցող նախաձեռնություններն ու միջոցառումները:

16. Երկարօրյա խմբի մանկավարժական աշխատողը կարող է ընտրություն կատարել ստորև տրված օրինակելի ցանկի ուսումնական դիսցիպլիններից և ուսումնական գործունեության տեսակներից՝ հաշվի առնելով սովորողների առաջադիմության հետ կապված խնդիրները, ուսումնական նախասիրությունները և մանկավարժահոգեբանական կարիքները:

1) **Կերպարվեստ**. նպաստում է սովորողի՝

ա. տեսողական և գունային ընկալումների, երևակայության պատկերային արտահայտման կարողությունների զարգացմանը,

բ. պատկերների միջև կապերի բացահայտմանը,

գ. ստեղծագործական ունակությունների դրսևորմանը:

2) **Ճեփագործություն**. նպաստում է սովորողի՝

ա. շարժումների (մանր և խոշոր մոտորիկայի) համակարգմանը,

բ. տարածական պատկերացումների զարգացմանը,

գ. երևակայության, հիշողության, տրամաբանական մտածողության զարգացմանը,

դ. մտավոր և հուզական վիճակի բարելավմանը,

ե. ինքնավստահության և պատասխանատվության բարձրացմանը:

3) **Երաժշտություն**. նպաստում է սովորողի՝

ա. լսողական ընկալումների զարգացմանը,

բ. երաժշտական կարողությունների բացահայտմանն ու դրսևորմանը,

գ. երաժշտական մտահորիզոնի ընդլայնմանը, ճաշակի ձևավորմանը,

դ. մտավոր և հուզական վիճակի բարելավմանը:

4) **Ընթերցանություն**. նպաստում է սովորողի՝

ա. մտահորիզոնի ընդլայնմանը,

բ. ճանաչողական և հաղորդակցական կարողությունների զարգացմանը,

գ. արժեքային համակարգի ձևավորմանը:

Տարրական դպրոցի սովորողների համար կարևոր է հեքիաթների ընթերցումը, որոնց շնորհիվ զարգանում է նրանց երևակայությունը, պատկերավոր խոսքը, նպաստում է բարոյական դաստիարակությանը:

5) **Նյութերի գեղարվեստական մշակում**. նպաստում է սովորողի՝

ա. գեղարվեստական, ստեղծագործական կարողությունների և աշխատանքային հմտությունների զուգակցմանը:

բ. զարդանախշերի ձևավորման հմտությունների զարգացմանը,

գ. խաղալիքների կամ կիրառական արվեստի որոշ առարկաների պատրաստման հմտությունների զարգացմանը:

6) **Խաղեր**. նպաստում են սովորողի՝

ա. հենաշարժական և մկանային համակարգերի զարգացմանը,

բ. արտակարգ իրավիճակներում կողմնորոշմանը,

գ. պատասխանատվության և կամքի ձևավորմանը,

դ. թիմային համագործակցության ու փոխօգնության խթանմանը,

ե. ինքնահաստատման և ինքնադրսևորման հնարավորությունների ընդլայնմանը:

7) **---------- ուսումնական առարկայի(ների) դասապատրաստում. նպաստում է (են) սովորողի.**

ա. գիտելիքի, հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձևավորմանը և (կամ) զարգացմանը.

բ. գործնական կարողությունների ձևավորմանը:

17. Միջին դպրոցում (5-9-րդ դասարաններ) երկարօրյա խմբի ստեղծման նպատակներն են՝

1) իրականացնել երկարօրյա խմբում ընդգրկված բոլոր սովորողների դասապատրաստման գործընթացը.
2) ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին աջակցել ուսումնական առարկաների չափորոշչային և ծրագրային պահանջներին համապատասխան ուսումնական նյութի յուրացման գործընթացում.
3) դասապատրաստման գործընթացում սովորողներին կրթական որակյալ ծառայությունների տրամադրում.
4) շարունակական աջակցության տրամադրում սովորողներին համագործակցային կարողունակությունների, ինքնուրույն սովորելու հմտությունների, ստեղծագործական ունակությունների և ինքնակազմակերպման կարողությունների զարգացմանը.
5) որևէ առարկայի (առարկաների) թեմատիկ գրավոր, բանավոր և գործնական աշխատանքներից 10 միավորային սանդղակով 1-3 միավոր գնահատված սովորողների ուսումնառության արդյունքների բարելավում:

18. Միջին դպրոցում (5-9-րդ դասարաններ) երկարօրյա խմբի աշխատանքների հիմնական ուղղություններն են.

1) առողջության պահպանում և առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում.
2) չափորոշչահեն ճանաչողական և ուսումնական գործունեության իրականացում, բնական, հասարակական, անհատական վարքագծային դրսևորումների նկատմամբ դիրքորոշման արտահայտման հմտությունների ձևավորում.
3) աշխատանքային հմտությունների զարգացում.
4) բարոյական, գեղագիտական, հայրենասիրական արժեհամակարգի զարգացմանը խթանում և այս ուղղություններով դաստիարակության իրականացում

19. Միջին դպրոցում (5-9-րդ դասարաններ) երկարօրյա խմբի ուսումնական խնդիրները.

1) բնության և հասարակության մասին գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի շարունակական զարգացում,
2) ուսումնառության նկատմամբ ձևավորված մոտիվացիայի հիման վրա ինքնակրթության, կրթության նկատմամբ համակարգված մոտեցումների և գործընթացների միջոցով աշխարհաճանաչողության ընդլայնում,
3) գործնական և ինքնուրույն աշխատանքների կատարման համար անհրաժեշտ հմտությունների ձևավորում և ամրապնդում,
4) սոցիալական, կենցաղային, առողջ ապրելակերպին և անվտանգ վարքագծին միտված գիտելիքների և հմտությունների զարգացում:

20. Միջին դպրոցում (5-9-րդ դասարաններ) երկարօրյա խմբի դաստիարակչական խնդիրները.

1) սովորողների ֆիզիկական և հոգեբանական առողջության պահպանման հմտությունների մշակույթի ձևավորում,
2) աշխատանքային հմտությունների զարգացման համատեքստում նպատակների սահմանման, գործողությունների համակարգված իրականացման և ստացված արդյունքների գնահատման վարքագծի ձևավորում և դրանով պայմանավորված աշխատանքների պլանավորում և իրականացում,
3) կարգապահության և վարքականոնների պահպանման ուղղությամբ վերաբերմունքի և մշակույթի ձևավորում,
4) գեղարվեստական և ստեղծագործական հմտությունների բացահայտում և զարգացում:

21. Ուսումնադաստիարակչական աշխատանքների ակնկալվող տարեկան արդյունքները միջին դպրոցում (5-9-րդ դասարաններ).

1) դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր.
2) ցուցաբերի պատասխանատու վերաբերմունք ուսումնառության նկատմամբ և սովորելու հմտություններ.
3) արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքներն առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ.
4) հետևի հասարակական համակեցության կանոններին և նորմերին, բացատրի դրանց կարևորությունը, ցուցաբերի պատասխանատու և հանրօգուտ վարքագիծ.
5) տարբերակի և համեմատի աշխարհաճանաչողության ձևերը և դրանց առանձնահատկությունները.

6) դրսևորի մշակութային ընկալման և արժևորման կարողություններ, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ.
7) ճանաչի սեփական ֆիզիկական հնարավորությունները և դրանց համապատասխան զարգացնի իր շարժողական ընդունակությունները.
8) մասնակցի արտադասարանական միջոցառումներին և դրսևորի որոշակի հմտություններ, ինչպես նաև հաղթահարի վերոնշյալ միջոցառումներին ընդգրկվելու հոգեբանական խոչընդոտները.
9) ցուցաբերի հոգատար վերաբերմունք դպրոցական գույքի, սարքավորումների, տարածքի նկատմամբ և նպաստի դպրոցում ներառական միջավայրի ձևավորմանը:

22. Տարրական դպրոցի ավարտական դասարանի սովորողների մոտ ձևավորվել են հանրակրթական հիմնական ծրագրի տարրական աստիճանի համար Հանրակրթության պետական չափորոշչով և առանձին ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված կրթական վերջնարդյունքների (կարողունակությունների) հիմնական պահանջները:

23. Միջին դպրոցում (5-9-րդ դասարաններ) տվյալ օրվա ուսումնական պարապմունքներից հետո հաջորդաբար իրականացվում են հետևյալ աշխատանքների հետևյալ տեսակները՝

1) սննդի կազմակերպում,
2) հանգստի, զբոսանքի, ինչպես նաև լիցքաթափող, սպորտայնացված խաղերի կազմակերպում,
3) դասապատրաստում, տնային հանձնարարությունների կատարում
4) էքսկուրսիաների կազմակերպում,
5) խմբակների պարապմունքներին և միջոցառումներին կազմակերպում:

24. Միջին դպրոցում (5-9-րդ դասարաններ) երկարօրյա խմբի հետ կատարվող աշխատանքների համառոտ նկարագրությունը. սույն ծրագրի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն դասերից հետո սովորողները նախ և առաջ ճաշում են և հանգստանում: Սովորողների ճաշի կազմակերպումը կրթական առումով զարգացնում է հիգիենայի կանոնների և կենցաղային վարքականոնների ծանոթացման և պահպանման հմտությունները: Սովորողների ակտիվ հանգիստի ձևերից են լիցքաթափող, ճանաչողական և զարգացնող խաղերը, քայլելը, որոնց ընթացքում ապահովվում է սովորողների շարժունությունը: Հանգստից հետո կազմակերպվում է սովորողների դասապատրաստումը: Դասապատրաստման ժամանակի բաշխումն ըստ առարկաների և ըստ շաբաթվա օրերի՝ ներկայացվում է խմբի աշխատանքի կարգացուցակում (ռեժիմում): Դասապատրաստումը

նախատեսում է բոլոր սովորողների կողմից ուսուցիչների հանձնարարած դասանյութերի յուրացում, ինչպես նաև առաջադրանքների կանոնավոր և համակարգված կատարում: Դասապատրաստումն իրականացնում է տվյալ ուսումնական հաստատության երկարօրյա ուսուցման մանկավարժական աշխատողը, որը կազմակերպում է սովորողի սննդի, հանգստի և դասապատրաստման գործընթացները, ինչպես նաև սովորողին անհրաժեշտ աջակցության ծառայությունները: Երկարօրյա խմբում ուսումնադաստիարակչական աշխատանքը ներառում է միմյանց հետ փոխկապակցված երկու ուղղությամբ գործողություններ.

1) գործողություններ, որոնք խմբային են և լիովին իրականացվում են մանկավարժական աշխատողի մասնակցությամբ,
2) գործողություններ, որոնք իրականացվում են սովորողի նախասիրությունների հաշվառմամբ, անհատական և փոքր խմբային աշխատանքների միջոցով, որտեղ մանկավարժական աշխատողը կատարում է ուղղորդողի և աջակցողի դեր: Այդպիսի գործողություններ են, օրինակ՝ որևէ առարկայի դասապատրաստումը, տնային հանձնարարությունների կատարումը, ուսումնական խմբակներին մասնակցելը, մտավոր (ինտելեկտուալ), գեղարվեստական, սպորտային, տեխնոլոգիական և այլ ուղղվածություն ունեցող նախաձեռնություններն ու միջոցառումները:

25. Միջին դպրոցում (5-9-րդ դասարաններ) երկարօրյա խմբի համար նախատեսվող պարապմունքներ.

1) **Հայոց պատմություն.** իրականացվում է առարկայական չափորոշչի և ծրագրերի միջոցով սովորողի գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձևավորումը.
2) **Մաթեմատիկա. (Հանրահաշիվ, Երկրաչափություն).** իրականացվում է առարկայական չափորոշչի և ծրագրերի միջոցով սովորողի գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձևավորումը:
3) **Մայրենի. (Հայոց լեզու, Հայ գրականություն).** իրականացվում է առարկայական չափորոշչի և ծրագրերի միջոցով սովորողի գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձևավորումը:
4) **Օտար լեզու.** իրականացվում է առարկայական չափորոշչի և ծրագրերի միջոցով սովորողի գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքային համակարգի ձևավորումը:
5) **Այլ ուսումնական առարկաներ (.....):**

6) **Սպորտայնացված խաղեր**. դրանք նպաստում են երեխաների հենաշարժական և մկանային համակարգերի զարգացմանը և որևէ մարզաձևի հիմնական տարրերի տիրապետմանը:

Ուսումնական գործունեության այս ձևերի կիրառումը նախատեսվում է կատարել՝ հաշվի առնելով սովորողների նախասիրությունները, կարիքները և անհատական առանձնահատկությունները:

III. Հանրակրթական ուսումնական հաստատության կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրյա ուսուցման ծրագիր

26. Տարրական և միջին դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրյա խմբի նպատակներն են՝

1) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին աջակցել ուսումնական առարկաների չափորոշչային և ծրագրային նվազագույն պահանջներին համապատասխան անհատական ուսուցման պլանով (այսուհետ՝ ԱՈՒՊ) սահմանված ուսումնական նյութի յուրացման գործընթացում,
2) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլանին (այսուհետ՝ ՄԱԾԱՊ) համապատասխան աջակցության ծառայությունների տրամադրման գործընթացի կազմակերպումը,
3) դասապատրաստման գործընթացում անհատականացված մոտեցումների կիրառում՝ հիմնվելով սովորողի ԱՈՒՊ-ի որակյալ մանկավարժամեթոդական ծառայությունների տրամադրում սովորողներին,
4) նպաստել սովորողների ներուժի բացահայտմանը (ուժեղ կողմերի), ինքնակազմակերպման և ինքնասպասարկման կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

27. Տարրական և միջին դպրոցում (1-9-րդ դասարաններ) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրյա խմբի աշխատանքների հիմնական ուղղություններն են՝

1) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական ու սոցիալ-հոգեբանական

զարգացման առանձնահատկությունների, հակումների և ընդունակությունների հաշվառումը,

2) ճանաչողական և ուսումնական գործունեությունը՝ հիմնված ԱՈՒՊ-ի և ՄԱԾԱՊ-ի վրա,
3) հաղորդակցական, համագործակցային և խմբային աշխատանքի հմտությունների զարգացումը,
4) սոցիալական հմտությունների ձևավորման և պատշաճ վարքագծի կանոնների դաստիարակությանն ուղղված գործընթացները,
5) առողջության պահպանումն ու առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորումը,
6) աշխատանքային հմտությունների զարգացումը,
7) որևէ առարկայից (առարկաներից) ԱՈՒՊ-ով սահմանված արդյունքի ապահովումը:

28. Տարրական և միջին դպրոցում (1-9-րդ դասարաններ) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրյա խմբի ուսումնական խնդիրներն են.

1) բնության, մարդու և հասարակության մասին գիտելիքների և պատկերացումների ձևավորում,
2) սովորելու հմտությունների ձևավորում,
3) գործնական հմտությունների ձևավորում և զարգացում,
4) ուսումնական առարկայի չափորոշչի և ծրագրի հիման վրա սովորողի ԱՈՒՊ-ով սահմանված նվազագույն պահանջների յուրացում,
5) ծնողի աջակցությամբ տնային հանձնարարությունների կատարման համար անհրաժեշտ սովորողի հմտությունների ձևավորում և զարգացում,
6) սոցիալական, կենցաղային գիտելիքների և հմտությունների զարգացում, հիգիենայի և անվտանգ վարքագծի կանոնների պահպանմանն ուղղված կարողությունների ձևավորում և զարգացում:

29. Տարրական և միջին դպրոցում (1-9-րդ դասարաններ) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրյա խմբի դաստիարակչական խնդիրներն են.

1) սովորողների ֆիզիկական և հոգեբանական առողջության ամրապնդում,
2) աշխատանքային հմտությունների զարգացում, սովորողի կարողություններին համապատասխան աշխատանքների կատարման հմտությունների ձևավորում,
3) կարգապահության և վարքականոնների պահպանման ուղղությամբ պատշաճ վարքագծի ձևավորում,
4) ստեղծագործական կարողությունների բացահայտում և հմտությունների ձևավորում:

30. Տարրական և միջին դպրոցում (1-9-րդ դասարաններ) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրյա խմբի ուսումնադաստիարակչական աշխատանքների ակնկալվող վերջնարդյունքները.

1) սովորողը պետք է ուցաբերի հետաքրքրություն սովորելու նկատմամբ.
2) յուրացնի իր ԱՈՒՊ-ով սահմանված ուսումնառության արդյունքները.
3) հոգատար վերաբերմունք դրսևորի բնակավայրի, համայնքի բնության և պատմամշակութային ժառանգության օբյեկտների, ինչպես նաև դպրոցի գույքի, սարքավորումների հանդեպ.
4) զբաղվի անհատական գեղարվեստական գործունեությամբ.
5) ստեղծի ընկերական հարաբերություններ, աջակցի մյուսներին, համագործակցի տարբեր ձևաչափերով, դրսևորի դրական վերաբերմունք.
6) կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին.
7) մասնակցի արտադասարանական միջոցառումների, որոնք կնպաստեն իր կրթական և մշակութային որակների զարգացմանը,
8) ցուցաբերի պատասխանատու վերաբերմունք ուսումնառության նկատմամբ.
9) կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ.
10) հետևի հասարակական համակեցության կանոններին և նորմերին.
11) դրսևորի արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ.
12) ճանաչի սեփական ֆիզիկական հնարավորությունները.
13) ցուցաբերի հոգատար վերաբերմունք դպրոցական գույքի, սարքավորումների և տարածքի նկատմամբ.
14) պահպանի սեփական մարմնի խնամքի, հիգիենայի և անվտանգ վարքագծի կանոնները:

31. Երկարօրյա խմբում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ տվյալ օրվա ուսումնական պարապմունքներից առնվազն 1,5 ժամ հետո հաջորդաբար իրականացվում են հետևյալ աշխատանքները՝

1) սննդի կազմակերպում,
2) հանգստի, զբոսանքի, ինչպես նաև լիցքաթափող, ճանաչողական և զարգացնող խաղերի կազմակերպում,
3) դասապատրաստում՝ ներառելով սովորողի ԱՈՒՊ-ով նախատեսված արդյունքները ուսումնասիրվող առարկայի (դասընթացի) թեմայից, ծնողի աջակցությամբ տնային հանձնարարությունների կատարում,

4) էքսկուրսիաների կազմակերպում,
5) միջոցառումների կազմակերպում:

32. Երկարօրյա խմբում ընդգրկված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի հետ իրականացվող աշխատանքի համառոտ նկարագրությունը.

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի երկարօրյա ուսուցման կազմակերպումը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

1) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցումը երկարօրյա խմբում իրականացվում է խմբի համար կազմված դասընթացների, ուսումնական գործունեության տեսակների ցանկին համապատասխան՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր սովորողի համար մշակված ԱՈՒՊ-ը,
2) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ԱՈՒՊ-ի և ՄԱԾԱՊ-ի հիման վրա իրականացվում են նրանց մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով տարածքային մանկավարժահոգեբանական աջակության կենտրոնի (այսուհետ՝ ՏՄԱԿ) մանկավարժական աշխատողներին, իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
3) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների երկարօրա ուսուցման գործընթացում խրախուսվում է նրա ծնողի մասնակցությունը և ԱՈՒՊ-ով պլանավորված արդյունքների ապահովմանն ուղղված համատեղ ջանքերը,
4) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցումը երկարօրյա խմբում պետք է իրականացվի որպես յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն:

33. Յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի որակյալ կրթության ապահովմանը խոչընդոտող գործոններ կարող են լինել իր կարողություններին չհամապատասխանող կրթական ծրագրերը, ուսումնական նյութերը, ուսուցիչների վերաբերմունքը, միջավայրի ֆիզիկական խոչընդոտները (հենաշարժական համակարգի խանգարումներ ունեցող երեխաների համար դպրոցում տեղաշարժվելու սահմանափակումները կամ չտեսնող երեխայի համար իրեն հարմարեցված բրայլյան դասագրքերի և այլ ուսումնական նյութերի բացակայությունը և այլն): Նշված արգելքների վերացումը երեխայի համար կրթական ծրագրերի մատչելիության ապահովման հիմնական գործոնն է: Հետևաբար, երկարօրյա խմբում յուրաքանչյուր, այդ թվում՝

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի որակյալ կրթության ապահովմանն ուղղված գործընթացները պետք է հիմնականում կենտրոնական միջավայրային խոչընդոտների վերացման և հավասար հնարավորությունների ստեղծման ուղղությամբ:

IV. **Սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա ուսուցման կազմակերպման ծրագիր**

34. Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված կամ պետության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա ուսուցումն իրականացվում է երկարօրյա խմբում ընդգրկված մյուս սովորողների հետ համատեղ, սովորողների համար նախատեսված առարկայական ծրագրերով նախատեսված ուսումնական նյութերի՝ դասապատրաստման միջոցով յուրացման համար:

35. Սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա ուսուցման կազմակերպման նպատակներն են՝

1) սոցիալապես անապահով ընտանիքների և ծնողազուրկ սովորողների համար ուսումնական հաստատության ֆինանսական միջոցների հաշվին լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցումը,

2) յուրաքանչյուր սովորողի համար որակյալ կրթական, ըստ անհրաժեշտության՝ մանկավարժահոգեբանական ծառայությունների տրամադրումը,

3) սովորողների մոտ, ըստ անհրաժեշտության՝ սոցիալական հմտությունների զարգացումը,

4) դասապատրաստման գործընթացում որակյալ մանկավարժամեթոդական ծառայությունների տրամադրումը սովորողներին,

5) շարունակական աջակցության տրամադրումը սովորողների ինքնուրույն սովորելու հմտությունների, ստեղծագործական ունակությունների և ինքնակազմակերպման կարողությունների զարգացմանը:

36. Սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա ուսուցման կազմակերպման հիմնական ուղղությունները.

1) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրումը,

2) ճանաչողական և ուսումնական գործունեությունը,

3) հաղորդակցական, համագործակցային և խմբային աշխատանքի հմտությունների զարգացումը,
4) սոցիալական հմտությունների ձևավորման և պատշաճ վարքագծի կանոնների դաստիարակությանն ուղղված գործընթացները,
5) առողջության պահպանումն ու առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորումը,
6) աշխատանքային հմտությունների զարգացումը,
7) ուսումնական առարկաներից սովորողների առաջադիմության խրախուսումը և ուսումնական նյութի յուրացման գործընթացում առաջացած դժվարությունների հաղթահարմանն աջակցությունը:

37. Սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ սովորողների համար տվյալ օրվա ուսումնական պարապմունքներից հետո մյուս սովորողների հետ համատեղ իրականացվում են հետևյալ աշխատանքները՝

1) սննդի կազմակերպում,
2) հանգստի, զբոսանքի, ինչպես նաև լիցքաթափող, ճանաչողական և զարգացնող խաղերի կազմակերպում,
3) ըստ անհրաժեշտության հոգեբանական աշխատանքի կազմակերպում,
4) դասապատրաստում, տնային հանձնարարությունների կատարում,
5) էքսկուրսիաների կազմակերպում,
6) խմբակների պարապմունքների և միջոցառումների կազմակերպում:

38. Սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա խմբի ուսումնական խնդիրները համապատասխանում են սույն օրինակելի ծրագրի 10-րդ և 19-րդ կետերում ներկայացվածին:

39. Սոցիալապես անապահով ընտանիքների, ծնողազուրկ սովորողների երկարօրյա խմբի դաստիարակչական խնդիրներն են.

1) սովորողների ֆիզիկական և հոգեբանական առողջության պահպանման հմտությունների ձևավորում,
2) աշխատանքային հմտությունների զարգացում, գործողությունների համակարգված իրականացման և ստացված արդյունքների գնահատման վարքագծի ձևավորում,
3) կարգապահության և վարքականոնների պահպանման ուղղությամբ վերաբերմունքի ձևավորում,
4) գեղարվեստական և ստեղծագործական հմտությունների զարգացում:

Ձև 1

Տարրական դասարանների երկարօրյա խմբի
պարապմունքների կարգացուցակի նմուշ-օրինակ
Լրացվում է ըստ շաբաթվա օրերի

հ/հ	**Ուսումնական գործունեության տեսակները**	**Ժամ**
Երկուշաբթի		
1	սնունդ, հանգիստ, զբոսանք	
2	դասապատրաստում (ուսումնական առարկայի, դասընթացի անվանումը)	
3	ուսումնական գործունեության տեսակը (ընթերցանություն, թելադրություն և այլն)	
4	դասապատրաստում (Մայրենի, Մաթեմատիկա, Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն)	
5	խաղեր	
Երեքշաբթի		
1	սնունդ, հանգիստ, զբոսանք	

2	դասապատրաստում (ուսումնական առարկայի, դասընթացի անվանումը)	
3		
4		
5		
Չորեքշաբթի		
1	սնունդ, հանգիստ, զբոսանք	
2	դասապատրաստում (ուսումնական առարկայի, դասընթացի անվանումը)	
3		
4		
5		
Հինգշաբթի		
1	սնունդ, հանգիստ, զբոսանք	
2	դասապատրաստում (ուսումնական առարկայի, դասընթացի անվանումը)	
3		
4		
5		
Ուրբաթ		
1	սնունդ, հանգիստ, զբոսանք	

2	դասապատրաստում (ուսումնական առարկայի, դասընթացի անվանումը)	
3		
4		
5		

Պարզաբանումներ

1. Երկարօրյա խմբի շաբաթական ծանրաբեռնվածությունը 5-օրյա ուսումնական շաբաթվա դեպքում (լրացվում է հաստատության կողմից) … ժամ է, իսկ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում (լրացվում է հաստատության կողմից)՝ … ժամ: Երկարօրյա պարապմունքների ընթացքում առանձին ժամեր են հատկացվում ուսումնական խաղերին և ուսումնական գործունեության այլ տեսակներին:
2. Օրվա ընթացքում յուրաքանչյուր պարապմունքից հետո նախատեսվում է 5-10 րոպե ընդմիջում, իսկ 1-ին դասարանցիների համար կարճատև (մինչև 10 րոպե) դադար է նախատեսվում նաև դասապատրաստումների ժամին:
3. Սովորողը որոշ ուսումնական գործունեության տեսակներ, մանկավարժի իմացությամբ, կարող է անցկացնել՝ մասնակցելով դպրոցում այս կամ այն խմբակի պարապմունքներին կամ դպրոցական այլ միջոցառումներին:
4. Երկարօրյա խմբի կրթական օրինակելի ծրագրի կազմակերպման ժամանակ պահպանվում են ՀՀ Առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված՝ «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնների և նորմերի, ՀՀ Առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի թիվ 32-Ն հրամանով հաստատված՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնների և նորմերի, ինչպես նաև ՀՀ Առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով հանրակրթական (բացառությամբ՝ նախադպրոցական) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կիրառվող» ՍԿ N 3.1.2-004-20 սանիտարական կանոնների պահանջները:

Ձև 2

5-9-րդ դասարանների երկարօրյա խմբի
պարապմունքների կարգացուցակի նմուշ-օրինակ
Լրացվում է ըստ շաբաթվա օրերի

հ/հ	**Ուսումնական գործունեության տեսակները**	**Ժամը**
Երկուշաբթի		
1	սնունդ, հանգիստ, զբոսանք	
2	դասապատրաստում (ուսումնական առարկայի, դասընթացի անվանումը)	
3	ուսումնական գործունեության տեսակը (..... ուսումնական նախագծի իրականացում և այլն)	
4	դասապատրաստում (Մայրենի, Մաթեմատիկա, Օտար լեզու, Ֆիզիկա և այլն)	
5	սպորտայնացված խաղեր (.....)	
Երեքշաբթի		
1	սնունդ, հանգիստ, զբոսանք	
2	դասապատրաստում (ուսումնական առարկայի, դասընթացի անվանումը)	
3		
4		
5		

6		
Չորեքշաբթի		
1	սնունդ, հանգիստ, զբոսանք	
2	դասապատրաստում (ուսումնական առարկայի, դասընթացի անվանումը)	
3		
4		
5		
6		
Հինգշաբթի		
1	սնունդ, հանգիստ, զբոսանք	
2	դասապատրաստում (ուսումնական առարկայի, դասընթացի անվանումը)	
3		
4		
5		
6		
Ուրբաթ		
1	սնունդ, հանգիստ, զբոսանք	
2	դասապատրաստում (ուսումնական առարկայի, դասընթացի անվանումը)	

3		
4		
5		
6		

Պարզաբանումներ

1. Երկարօրյա խմբի շաբաթական ծանրաբեռնվածությունը 5-օրյա ուսումնական շաբաթվա դեպքում ( ) ժամ է, իսկ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ( ) ժամ: Երկարօրյա պարապմունքների ընթացքում առանձին ժամեր են հատկացվում ուսումնական խաղերին և ուսումնական գործունեության այլ տեսակներին:
2. Սովորողը որոշ ուսումնական գործունեության տեսակներ, մանկավարժի իմացությամբ, կարող է անցկացնել՝ մասնակցելով դպրոցում այս կամ այն խմբակի պարապմունքներին կամ դպրոցական այլ միջոցառումներին:
3. Երկարօրյա խմբի կրթական օրինակելի ծրագրի կազմակերպման ժամանակ պահպանվում են ՀՀ Առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված՝ «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնների և նորմերի, ՀՀ Առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի թիվ 32-Ն հրամանով հաստատված՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնների և նորմերի, ինչպես նաև ՀՀ Առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով հանրակրթական (բացառությամբ՝ նախադպրոցական) ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կիրառվող» ՍԿ N 3.1.2-004-20 սանիտարական կանոնների պահանջները: